ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 43-Լ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 23.06.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 22-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ՀՀ ոստիկանության զորքերում բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստանալու իրավունքի համապատասխանությունը ստուգելու և ներկայացված փաստաթղթերի հիման վրա վարձակալության գործ կազմելու համար պատասխանատուների փոփոխությամբ պայմանավորված՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.ՀՀ ոստիկանության պետի 2020 թվականի հունիսի 23-ի «ՀՀ ոստիկանության ծառայողներին ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցում վճարելու գործընթացը կանոնակարգելու և ՀՀ ոստիկանության պետի 2019 թվականի հունվարի 9-ի թիվ 1-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 22-Լ հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետի՝

1) «ա)» պարբերությունում «Հայկ Հարությունի Բաբայանին» բառերը փոխարինել «Մարտիրոս Վալերիի Մուրադյանին» բառերով,

2) «բ)» պարբերությունում «Թաթոս Արևշատի Համբարյանին» բառերը փոխարինել «Կորյուն Դերենիկի Հովսեփյանին» բառերով:

2.Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

ԳՆԴԱՊԵՏ **Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

«15» դեկտեմբերի 2020թ.
ք. Երևան